37
2-11

1 MAR 2010

ՀՍԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

---

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՍԵԿՏՈՐ

# ԲԱՑ ԱՆԵՆՔ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՌՆԵՐԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՋ

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

1. Հրահանգ դպրոցները ձեռնարկ-ներին ամրացնելու մասին:
2. Տիպական պայմանագիր գործա-րանային յոթնամյակների (Ф. З. С.) յեվ գործարանների միջեվ:
3. Տիպական պայմանագիր կոլյե-րիտների յեվ կոլտնտեսությունների միջեվ:

---

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1930

09 SEP 2013

44.571

37
Z-11

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 852
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 6026 (բ)
ՏԻՐԱԺ 2000

# ԲԱՑ ԱՆԵՆՔ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՌՆԵՐԸ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՌԱՋ

*Յելնելով դպրոցների պոլիտեխնիկական կրթության հրամայական պահանջներից, Լուսժողկոմատը և շահագրգռված հիմնարկները հրատարակել են այս տիպական պայմանագրերը և մեր տնտեսական արհեստակցական ու լուսավորական բարձրագույն օրգանների հրահանգը՝ դպրոցները տնտեսական ձեռնարկներին ամրացնելու մասին:*

*Այս տիպական պայմանագրի կենսագործումը խոշոր հեղաշրջում կմտցնի մեր դպրոցական վողջ աշխատանքներում, կազատի մեր դպրոցները սխոլաստիկայից և կդարձնի մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերի հետ համընթաց գնացող և այդ վերակառուցմանը նպաստող գործոն:*

*Անհրաժեշտ է, վոր տնտեսական ձեռնարկների ղեկավարները, Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների վարչությունները, լուսաշխատավորները, արհեստակցական և ԼԿՅԵՄ կազմակերպությունները խորապես գիտակցեն պոլիտեխնիկական կրթության այս խոշորագույն նշանակությունը, վոր այսօր կանգնած է մեր առաջ և պահանջում է կենսագործում:*

Պոլիտեխնիկական կրթությունը խոսքով չի ստեղծվում, նա պահանջում է բազա և այդ բազան պետք է ստեղծվի: Դրա համար առաջարկվում է տնտեսական ձեռնարկների ղեկավարներին, Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների վարչություններին, լուս. և պրոֆ. աշխատավորներին ու ԼԿՅԵՄ կազմակերպություններին, այս տիպական պայմանագրերի հիման վրա, ձեռնարկել դպրոցներն ամրացնելու տնտեսական ձեռնարկություններին, կոլեկտիվ և Խորհրդային տնտեսություններին և կենսագործել պայմանագրերից բղխող բոլոր խնդիրները:

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՀԱՆԵՍՈՂԼՅԱՆ.
Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄ՝ Ա. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ.
ՀԱՄԽ-Ի ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ.
ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ԼԻԱԶՈՐ՝ ՄԵԼՔՈՆՅԱՆ.



# ՀՐԱՀԱՆԳ

## ԴՊՐՈՑՆԵՐԸ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժողովրդական կրթության վերաբերյալ յերկրորդ կուս–խորհրդակցության արդյունքների առթիվ Համ. Կոմկուսի (բ) Կենտկոմի 1930 թ. 25 հուլիսի վորոշումը, այլև պոլիտեխնիկական կրթության առաջին Համառուսական համագումարի վորոշումները, պարտադրում են կադրերի պատրաստման խնդիրներով զբաղվող բոլոր կազմակերպություններին, վորպես տնտեսական—քաղաքական կարեվորագույն խնդիր, անմիջապես ձեռնարկել պոլիտեխնիկացիայի յենթարկելու ժողովրդական կրթության ամբողջ սիստեմը և հատկապես նրա մասսայական նախնական ողակը —7-ամյա դպրոցը: Առաջին պայմանը, վոր կարող է ապահովել պոլիտեխնիկական կրթության անմիջական իրագործումը յերկրորդ աստիճանի դպրոցներում —դա բոլոր դպրոցների ձեռնարկություններին ամրացնելն ու այդ դպրոցները ձեռնարկությունների որգանական մասը դարձնելն է, վորն իրագործելու համար Ս. Խ. Հ. Մ. Ժողտնտխորհը, Լուսժողկոմատը, Ներքգործժողկոմատը, Առև–

ուրի ժողկոմատը, Հաղորդակցության ժողկոմատը, Պրոֆմիությունների Համ. Կենտ. Խորհուրդը, ԼԿՑԵՄ Կենտկոմը և Լուսաշխի Կենտկոմը, առաջարկում են բոլոր յենթակա կազմակերպություններին անմիջապես ամրացնել բոլոր դպրոցները ձեռնարկություններին, յելակետ ընդունելով նրանց տերիտորիալ դասավորությունը և ըստ հնարավորության ամրացնել ձեռնարկությունը այն դպրոցին, որտեղ սովորում են տվյալ ձեռնարկության մեջ աշխատողների զավակները:

Այդ աշխատանքները կազմակերպելիս ղեկավարվել հետևյալով.—

1. Ամրացումը կատարել դպրոցի և արտադրության միջև կնքված պայմանագրի հիման վրա, որին իբրև հիմք ընդունել սրան կցված և բոլոր ղեկավար կազմակերպությունների հավանություն ստացած տիպական պայմանագիրը: Պայմանագիրը կնքելու աշխատանքը պետք է մասսայական-քաղաքական կամպանիայի բնույթ կրի: Պայմանագիրը կազմելիս պետք է մասնակից դարձնել ձեռնարկի և դպրոցի ամբողջ ակտիվին (բանվորներին, ծառայողներին, վարպետներին, մանկավարժներին և այլն) և բանվորական ամբողջ մասսային: Նախքան պայմանագիր կնքելը, պետք է ի մի հավաքել բանվորների և լուսաշխատավորների առաջարկները. պետք է խրախուսել բանվորների գործնական նշանակություն ունեցող մանր առաջարկները պայմանագրի մեջ մտցնելուց և միայն բանվորների առաջարկներն ի մի գումարելով և տիպական պայմանագրի հիման վրա, պետք է անցնել պայմանագրի վերջնական ձևակերպման աշխատանքներին:



2. Առանձին շրջաններում, ուր գոյություն ունեն մանր արտադրություն կամ յեթե ձեռնարկների թիվը դպրոցների թվից քիչ է, կազմակերպությունները թույլ պիտի տան 2–3 դպրոցի կցվել մի ձեռնարկի և ընդհակառակը, մի դպրոցի՝ կցվելու 2—3 ձեռնարկների: Ձեռնարկների թվին են պատկանում նաև յերկաթուղային արհեստանոցները, տրամվայի կայանները, ջրաղացները, ջրմուղները, տեղական կոմունալ նշանակություն ունեցող ելեկտրոկայանները և այլն:

3. Մասսայական դպրոցում իսկական պոլիտեխնիկական դաստիարակություն մտցնելու նպատակով, որը պահանջում է ոչ միայն մասնակցություն ունենալ արտադրական աշխատանքին և ամրացված ձեռնարկի արտֆինպլանի կատարմանը, այլ նաև աշակերտներին ծանոթացնել շրջանի բոլոր հիմնական արտադրություններին: Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը, ՀԱՄԽ-ը, Լուսժողկոմատը, Ներքառժողկոմատի լիազոր—ներկայացուցչությունը, Ներքին Գործերի ժողկոմատի լիազոր ներկայացուցչությունը, ԼԿՑԵՄ-ի Կենտկոմը և Լուսաշխի Կենտվարչությունը, առաջարկում են իրենց կազմակերպություններին հաշվի առնելով տվյալ շրջաններում քաղաքի արտադրական բնույթը (տեղական պայմաններից յելնելով), այսինքն յեղած բոլոր գործարանները, ելեկտրոկայանները և այլն, կազմել ճշգրիտ պլան և մանրամասն կերպով բանակցել ձեռնարկների հետ, առաջուց մշակված պլանով, բոլոր դպրոցները էքսկուրսիաներ կատարեն դեպի տվյալ ձեռնարկներից յուրաքանչյուրը, հաշվի առնելով տվյալ էքսկուրսիայի համապատասխան լինելը և դպրոցում յե-

ված նյութերի մշակումը: Շրջանի կամ քաղաքի արտադրական բնույթը պարզելու աշխատանքների ղեկավարությունը դրվում է համապատասխան ստորաբաժան կազմակերպությունների վրա: Շրջանի բնույթը պարզելը և էքսկուրսիաների կազմակերպման պլանը կազմելը պետք է վերջացնել 1930 թ. դեկտեմբերին:

4. Շրջանի մասսայական դպրոցները պոլիտեխնիզմացնելու ամբողջ օպերացիոն աշխատանքը ղեկավարելու և մասնավորապես, դպրոցները արտադրությանը միացնելու պլանային աշխատանքը կազմակերպելու համար, ստեղծել բոլոր շահագրգռված կազմակերպությունների բանվորական, ճարտարապետական, և մանկավարժական լայն հասարակության ներկայացուցիչներից, պոլիտեխնիզմի շրջանային շտաբներ, վորոնք սկսած այս տարվանից, տասն որը մեկ անգամ պետք է կարճ ձևով տեղեկություններ հաղորդեն դպրոցները ձեռնարկներին ամրացնելու վերաբերյալ աշխատանքի ընթացքի մասին պոլիտեխնիզմի Համահայաստանյան շտաբին:

Պոլիտեխնիզմի շտաբների կանոնադրության և շտաբների աշխատանքի բովանդակության մասին կհայտնվի լրացուցիչ կերպով:

5. Դպրոցների և ձեռնարկների մեջ պայմանագրեր կնքելը պետք է կատարվի շրջանում՝ դպրոցը արտադրության հետ կապելու միասնական որը: Պոլիտեխնիզմի շրջանային շտաբները իրենց վրա պիտի վերցնեն այդ որվա կազմակերպումը:

6. Այս հրահանգի հիման վրա Ժող.Տնտ.Գեր.Խորհ-ի և Առևտրի ժողկոմատի լիազոր ներկայացուցչության արդյունաբերական միավորումները և պրոֆմիությունների



դ. Կոմիտեները պետք է տան տեղերին մշակված ցուցմունքներ, դպրոցները ձեռնարկներին ամրացնելու մասին:

Ս. Խ. Հ. Մ. Ժող. Տնտ. Գեր. Խորհրդի փոխ նախագահ՝ Դոգատով.

Լուսժողկոմի տեղակալ՝ Եպշտեյն.

Հաղորդակցության ժողկոմատի կոլեգիայի անդամ՝ Պոտշեվալին.

Համ. Արհ. Միութ. Կենտ. Խորհրդի նախ. անդ. Նիկիտինա.

ԼԿՅԵՄ–ի Կ. Կ.–ի քարտուղար՝ Սուլտանով.

Ս. Խ. Հ. Մ. Առևտրի ժողկոմի տեղակալ՝ Կիսիս.

Լուսաշխի Կ. Կ. քարտուղար՝ Մեխոնոշինա.

Ներքին Գործերի ժողկոմ-ի ներկ-իչ՝ Շիրվինդտ.

# ՏԻՊԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՅՈԹՆԱՄՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Կոմունիստական կուսակցության ծրագիրը պահանջում է «Ընդհանուր և պոլիտեխնիկական կրթություն մինչև 17 տարեկան հասակը յերկու սեռի յերեխաների համար»: Տակավին 30 տարի առաջ Լենինն ասել է՝ «Ապագա հասարակության իդեալը չի կարելի պատկերացնել առանց ուսուցումը կապակցելու յերիտասարդ սերնդի արտադրական աշխատանքին: Առանց արտադրական աշխատանքի վոչ ուսուցումը և կրթությունը և վոչ էլ առանց զուգընթաց ուսման և կրթության արտադրական աշխատանքը չեն կարող դրվել այնպիսի բարձրության վրա, վորպիսին պահանջում է ժամանակակից տեխնիկան և գիտությունը»:

Պոլիտեխնիկական կրթության կարևորության և բանվոր դասակարգի համար նրա ունեցած հսկայական նշանակության մասին շեշտել են նաև մեր մեծ ուսուցիչներ՝ Մարքսը և Ենգելսը:

60 տարի առաջ 1-ին Ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսի բանաձևերի մեջ Մարքսի ձեռքով գրվել է՝ «Կրթություն ասելով, մենք հասկանում ենք յերեք բան. 1) մտավոր կրթություն, 2) Ֆիզիկական զարգացում և 3) պոլիտեխնիկական դաստիարակություն, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին և միևնույն ժամանակ տալիս է յերեխային և դեռահասին բոլոր արտադրությունների տարրական գործիքների հետ վարվելու գործնական ունակություններ»:

Իսկ Մարքսիզմի մյուս հիմնադիրը՝ Ֆրիդրիխ Ենգելսը ասել է. «Կապիտալիստական արտադրության կապանքներից ազատագրված հասարակությունը կստեղծի բազմակողմանիորեն զարգացած արտադրողների նոր սերունդ, վորը կհասկանա իր ամբողջությամբ արտադրության գիտական հիմունքները, աշխատելով այնտեղ և գործնականում ծանոթանալով արտադրության հիմնական ճյուղերին սկզբից մինչև վերջը»:



Պոլիտեխնիկական կրթությունը ծանոթացնում է ժամանակակից տեխնիկայի հիմունքներին և տալիս ընդհանուր աշխատանքային ունակություններ: Նա հնարավորություն է տալիս հեշտությամբ անցնելու արտադրության մի ճյուղից մյուսին թե գյուղում և թե քաղաքում:

Տեխնիկական կադրերի պահանջը, վորը ներկայումս սուր կերպով դրված է կուլտուրական շինարարության առաջ ռեկոնստրուկցիայի յենթարկվող արդյունաբերության և գյուղատնտեսության կողմից, կարող է ռացիոնալ կերպով և արագորեն լուծվել դպրոցների լայն պոլիտեխնիզացիայի միջոցով:

Իսկական պոլիտեխնիկական դպրոցն է, վոր պետք է տա սոցիալիստական արտադրությանը հարյուր հազարավոր ստեղծագործողներ, կազմակերպիչներ, գյուտարարներ և հարվածայիններ:

Նկատի ունենալով կուսակցության և սովետական պետության այդ պատասխանատու խնդիրները և պարտադիր համարելով մեզ համար ակտիվ կերպով մասնակցելու նրանց իրագործմանը, մենք . . . . : գործարանի ներկայացուցիչները, գործարանի վարչության, գործարկոմի, բանվորների ընդհանուր ժողովի, գործարանի կոմ. և ԼԿՅԵՄ բջիջների անունից և

. . . . . . . . . դպրոցի ներկայացուցիչներս, դպրոցական խորհրդի, տեղկոմի, աշակերտական խորհրդի և ուսուցիչների ու աշակերտության ընդհանուր ժողովի անունից մյուս կողմից, կնքում են այս պայմանագիրը . . . . . . . ժամանակով հետևյալի մասին:

## Ա. ԳՈՐԾԱՐԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Դպրոցական խորհրդում և դպրոցի այլ կազմակերպություններում ապահովել բանվորների մասնակցությունը, այն է՝ ամրացնել բանվորական . . . . (այսքան) բրիգադներ, յուրաքանչյուրի մեջ . . . հոգի, դպրոցական հետևյալ կազմակերպություններին . . . . . . . . . սրանց ամենօրյա աշխատանքներին մասնակցելու համար:

2. Գործարանային կազմակերպությունները տալիս են դպրոցին . . . . վորակյալ բանվոր-հարվածայիններ, շաբաթային կարգով պոլիտեխնիկական աշխատանքը ղեկավարելու համար և . . . . . . . վորակյալ բանվորներ, վորոնք հասարակական բեռնավորման կարգով պետք է աջակցեն պոլիտեխնիկական աշխատանքներին:

Այս բանվորները լինելու յեն դպրոցի պոլիտեխնիկական աշխատանքի դասատուներ և ղեկավարներ. (Թվել կոնկրետ կերպով այն արհեստանոցները, խմբակները, արտադրական ցեխերը, լաբորատորիաները, վորոնց ամրացվելու յեն բանվորները):

3. Ապահովել տեխնիկական պերսոնալի մասնակցությունն այն մեթոդական հանձնաժողովների մեջ, վորոնց նպատակն է դպրոցի ծրագրերը հարմարեցնել



ընդհանրապես . . . . . . արտադրության— (արտադրության տվյալ հիմնական ճյուղին) և մասնավորապես . . . . . . գործարանի առանձնահատկություններին և տրամադրել աշխատանքների կոնսուլտացիայի և ղեկավարման համար:

Ծանոթություն.—Համաքաղաքային, կամ ամբողջ շրջանի դպրոցների համար մեկ ընդհանուր արհեստանոցներ, լաբորատորիաներ կազմակերպելու դեպքում, գործարանները դրանց ապահովում են վարպետներով, տեխնիկներով և այլն:

4. Սովորող բանվորների և ուսուցիչների համար տեխնիկական պերսոնալի և վորակյալ բանվորների ուժերով ստեղծել . . . . կաբինետ կամ անկյուն՝ գործարանի ակումբում մասնակից դարձնելով այդ գործին դպրոցի աշխատակիցներին:

5. Գործարանի ճարտարապետական տեխնիկական ուժերով դրույցների և դասախոսությունների ցիկլ կազմակերպել . . . . . արդյունաբերության հիմնական հարցերի վերաբերյալ. դասատուների համար էքսկուրսիա կազմակերպել դեպի գործարան, արտադրությունը տեղում ուսումնասիրելու համար:

6. 6-րդ և 7-րդ խմբերի աշակերտներից . . . . հոգու թույլ տալ մտնել գործարան պրակտիկայի համար, յուրաքանչյուր խմբակ 4-ական դեկադով, 6-րդների համար օրական 3 ժամ, իսկ 7-րդների համար՝ 4 ժամ: Ոգնել գործնական աշխատանքների մանրամասն ծրագիր մշակելու տեխնիկական պերսոնալի և վորակյալ բանվորների ուժերով:

7. Դպրոցի . . . . . . մանկավարժների համար արտադրական պրակտիկա կազմակերպել . .

ությունների նիստերում լսել դպրոցի և նրա կազմակերպության եռամսյա հաշվետվությունը և այդ զեկուցումները դնել նաև բանվորների համագործարանային և ցեխային ժողովներում:

14. Նպատակ ունենալով ավելի կոնկրետ և մոտիկից ղեկավարելու դպրոցը, պետք է ամրացնել այն, առանձին ձեռնարկությունների ցեխերին:

15. Ակտիվ կերպով մասնակցել դպրոցի արտադրական մանկավարժական աշխատանքներին և արտադրական պլանի կատարմանը հետևյալ ձևով՝

1) «Ահազանգի պոստեր» կազմակերպել, որոնք ազդանշան պետք է տան դպրոցական գործի այս կամ այն ճեղքվածքի մասին:

2) Աջակցել լուսաշխատավորների ինքնամբացմանը դպրոցին մինչև հնգամյակի վերջը:

3) Դպրոցի ուսումնական-դաստիարակչական աշխատանքների ռացիոնալիզացիայի նկատմամբ լուսաշխատավորների արած առաջարկությունների կիրառմանը լայն չափով աջակցել:

4) Դպրոցի ներքին միջոցները հայտնաբերել և դպրոցական կարիքների համար օգտագործել նպատակահարմար ձևով:

16. Գործարանները և բանվորները պատասխանատու յեն դպրոցների ուսումնական, նյութական ամբողջ աշխատանքների համար:

## Բ. ԴՊՐՈՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Գործարանային կազմակերպությունների կուլտուր-քաղաքական աշխատանքներին օժանդակելու համար . . . . . աշխատակիցներից բաղկացած բրիգադներ տրամադրել՝



1 . . . . . բրիգադան . . . . . հոգուց . . . կազմակերպության համար:

2 . . . . . .

3 . . . . . ..

4 . . . . . .

2. Վերացնել գործարանի . . . . անգրագետների անգրագիտությունը, որոնցից կին՝ . . . . տղամարդ . . . և տեղական ազգայնականությունից . . . հոգու . . . . ժամանակամիջոցում:

3. Դպրոցների և այլ կուլտհիմնարկների ուժերով բանվորների և նրանց ընտանիքների համար կազմակերպել մանկավարժական կոնսուլտացիա. կոնսուլտացիայի աշխատանքի պլանը դպրոցը կազմում է գործարանի կուլտ-շինարարական խորհրդի հետ:

4. Գործարանին առընթեր հանրակացարանի, մանկական սենյակների, մսուրների և մանկական օջախների համար մշտական աշխատանք կատարելու նպատակով հատկացնել . . . . աշակերտ:

5. Կուլտշինարարության խորհրդի, ձեռնարկության և բանակումբի վարչության պահանջների համաձայն, նշանակել . . . . . . . . ընկերների, որոնք պետք է անցկացնեն դասախոսություններ, զրույցներ, զեկուցումներ (հակակրոնական, կենցաղային, գիտական, հասարակական, քաղաքական և այլն):

6. Գեղարվեստական խմբակների թեմատիկան համաձայնեցնել ձեռնարկության տնտեսական քաղաքական խնդիրներին: Բանվորների և նրանց ընտանիքների գեղարվեստական ժամանցները սպասարկելու համար կազմակերպել . . . . . . բրիգադա:

7. Ակտիվ կերպով մասնակցել շինարարության արտադրական աշխատանքին, արդֆինպլանի կատարմա-

նը, դառնալով պատասխանատու արդֆին պլանի կատարման և գերակատարման գործում հետևյալ խնդիրներում՝

1) Արտադրական պատվերների կատարումը,

2) Արտադրության ռացիոնալիզացիայի նպատակով բանվորների կողմից արված առաջարկների ամփոփումը և մշակումը:

3) Գործարանի տերրիտորիայի վրա վոչ պակաս քան . . . . յերկաթյա և այլ մետաղյա կտորների հավաքման գործին մասնակցելը . . . . ժամանակամիջոցում:

4) «Առաջանցիկ պոստեր»-ի կազմակերպումը և աշակերտների, նրանց ծնողների և բանվորների մոբիլիզացիան, գործարանային աշխատանքների ճեղքվածքները շուտափույթ վերացնելու համար:

5) Տարաների, մակուլատուրայի և այլնի հավաքումը . . . . . ժամանակամիջոցում:

6) Բանվորների և ծնողների հետ անհատական պայմանագրեր կնքելը.

7) Մինչև հնգամյակի վերջին արտադրության մեջ աշխատելու համար բանվորների ինքնակոնտրակտացիայի գործի կազմակերպումը:

8) Գործարանի ստախանովական կարիքների համար դպրոցականների ուժով գործարանային բանջարանոցների կազմակերպումը. դրա համար հատկացնել . . . . . . հողի:

9) Թրևումների և հարբեցողության դեմ մասսայական աշխատանք կազմակերպելը (դեմոնստրացիաներ, յերեկոներ և այլն):

10) Կոոպերացիային աջակցելը՝ բանվորների շրջանում մթերքների բաշխումը կարգավորելու համար:



11) Գործարանի ճաշարանի աշխատանքներին աջակցելը՝ բարեկարգ վիճակում դնելու համար:

8. Գործարանի բանվորների բնակարաններում կուլտուրական աշխատանքներ կազմակերպել:

9. Մասնակցել գործարանի շեֆության աշխատանքներին:

10. Գործարանային շրջիկ գրադարաններ կազմակերպել աշակերտների ուժերով . . . . հետ, այլ և օգնել ակմբային գրադարանի աշխատանքներին և բանվորական բնակարանային այլ վայրերում կատարվող գրադարանային աշխատանքներին:

11. Գործարանը և գործարկոմը զեկուցում է տալիս դպրոցականների և ծնողների ժողովներում—իրենց արտադրական աշխատանքների մասին:

12. Դպրոցը և գործարանը պատասխանատու յեն ձեռնարկած տնտեսական և քաղաքական կամպանիաներին:

Հանձ առնելով այս պարտավորությունները, գործարանային կազմակերպությունները և դպրոցն անհրաժեշտ են գտնում վորոշելու այս պայմանագրի ստուգման ժամկետը . . . . . . . :Այս պայմանագիրը լայն կերպով պետք է պարզաբանվեն գործարանի բանվորներին, դպրոցական աշխատակիցներին և ծնողներին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝

1. Գործարանի վերատեսուչ՝
2. Գործարանի Կուսբջիջի քարտուղար՝
3. Գործարանի ԼԿՅԵՄ բջիջի քարտուղար՝
4. Դպրոցի վարիչ
5. Գործարկոմի նախագահ՝
6. Դպրոցի տեղկոմի նախագահ՝
7. Դպրոցի աշ. խորհրդի նախագահ՝

# ՏԻՊԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈԼՅԵՐԻՏ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Կոմունիստական կուսակցության ծրագիրը պահանջում է «ընդհանուր յեվ պոլիտեխնիկական կրթություն մինչեվ 17 տարեկան հասակը յերկու սեռի յերեխաների համար»:

Տակավին 30 տարի առաջ Լենինն ասել է․

«Ապագա հասարակության գաղափարը չի կարելի պատկերացնել առանց ուսուցումը կապակցելու յերիտասարդ սերնդի արտադրական աշխատանքին: Առանց արտադրական աշխատանքի՝ վոչ ուսուցումը և կրթությունը և վոչ էլ առանց զուգընթաց ուսուցման և կրթության, արտադրական աշխատանքը չեն կարող դրվել այնպիսի բարձրության վրա, վորպիսին պահանջում են ժամանակակից տեխնիկան և գիտությունը»:

Պոլիտեխնիկական կրթության կարեվորության և բանվոր դասակարգի համար նրա ունեցած հսկայական նշանակության մասին շեշտել են նաև մեր մեծ ուսուցիչներ՝ Մարքսը և Ենգելսը:

60 տարի առաջ 1-ին Ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսի բանաձևերի մեջ Մարքսի ձեռքով գրվել է՝

«Կրթություն ասելով մենք հասկանում ենք յերեք բան․ 1) մտավոր կրթություն, 2) ֆիզիկական զարգացում և 3) պոլիտեխնիկական դաստիարակություն, վորը ծանոթացնում է բոլոր արտադրական պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին յեվ միևնույն ժամանակ տալիս է յերեխային և դեռահասին բոլոր



արտադրությունների տարրական գործիքների հետ վարվելու գործնական ունակությունները:

Իսկ Մարքսիզմի մյուս հիմնադիրը՝ Ֆրիդրիխ-Ենգելսն ասել է՝

«Կապիտալիստական արտադրության կապանքներից ազատագրված հասարակությունը կստեղծի բազմակողմանիորեն զարգացած արտադրողների նոր սերունդ, վորը կ՚հասկանա իր ամբողջությամբ արտադրության գիտական հիմունքները, աշխատելով այնտեղ և գործնականում ծանոթանալով արտադրության հիմնական ճյուղերին սկզբից մինչև վերջը»:

Պոլիտեխնիկական կրթությունը ծանոթանում է ժամանակակից տեխնիկայի հիմունքներին և տալիս է ընդհանուր աշխատանքային ունակություններ: Նա հնարավորություն է տալիս հեշտությամբ անցնելու արտադրության մի ճյուղից մյուսին թե գյուղում և թե քաղաքում:

Տեխնիկական կադրերի պահանջը, վորը ներկայումս սուր կերպով դրված է կուլտուրական շինարարության առաջ, ռեկոնստրուկցիայի յենթարկվող արդյունաբերության և գյուղատնտեսության կողմից, կարող է ռացիոնալ կերպով և արագորեն լուծվել դպրոցների լայն պոլիտեխնիզացիայի միջոցով:

Իսկական պոլիտեխնիկական դպրոցն է, վոր պետք է տա սոցիալիստական արտադրությանը հարյուր հազարավոր ստեղծագործողներ, կազմակերպիչներ, գյուտարարներ և հարվածայիններ:

Նկատի ունենալով կուսակցության և պրոլետարական պետության այդ պատասխանատու խնդիրները և պարտադիր համարելով մեզ համար ակտիվ կերպով մասնակցել նրանց իրագործմանը, մենք . . . .

. . . . . . . . . . ներկայացուցիչներս կոլտնտեսության վարչության, կոլտնտեսականների ընդհանուր ժողովի, Կոմ. և ԼԿՅԵՄ բջիջների անունից և . . . . . . . . . . գյուղի ներկայացուցիչների՝ գյուղական խորհրդի, ԼԿՅԵՄ բջիջի, տեղկոմի, աշակերտական խորհրդի ժողովի անունից, մյուս կողմից, կնքում ենք այս պայմանագիրը . . . . . ժամանակով հետևյալի մասին,

## Ա. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կոլտնտեսությունն իր արտադրական պլանները մշակելիս, նշում է այն բոլոր ձեռնարկները, վորոնք անհրաժեշտ են կոլտնտեսականների մեջ կուլտ-աշխատանքն ապահովելու համար, այսինքն՝ 1) Կոլտնտեսությունն իր անդամների բոլոր յերեխաներին պարտադիր կերպով ընդգրկում է դպրոցներում. 2) Պարտավորեցնում է բոլոր անգրագետ մեծահասակներին հաճախել լիկկայան: 3) Ստեղծում է բոլոր նախադրյալները՝ կոլխոզի կուլտուր-կրթական գործն ապահովելու համար (խրճիթ-ընթերցարան, ռադիո, կարմիր անկյուն, քաղլուսաշխատանք և այլն): 4) Կոլտնտեսությունը տանում է լայն դաստիարակչական մասսայական աշխատանք, անհատական աշխատավորական տնտեսություններն ընդհանրապես գյուղի կուլտուր-կրթական աշխատանքների մեջ ներգրավելու համար:

2. Պոլիտեխնիկ կրթությունն ապահովելու համար կոլտնտեսությունը պարտավորվում է տրամադրել դպրոցին իր արհեստանոցները, մեքենաները, որինակելի գոմը, կառուցում է . . . . . . . . . աշակերտի համար . . . . . տալի արհեստանոց և լաբորատորիա, վորոնք գտնվելու յեն կոլտնտեսության ուսումնական ցեխեր և աշակերտներն այդ ցեխերում ըստ պլանի պետք է կատարեն արտ. պատվերներ. տրամադրում է դպրոցի աշակերտության համար . . . . . . . . բանվ. անյակներ, ծախսելով դրա . . . . . . . . ուրլի: Տրամադրում է . . . . . . . հեկտար փորձնական և գործնական աշխատանքներ կատարելու համար հողամաս, բանջարանոց, այգի, ծառատունկ, հավաբուծարան, թռչնաբուծարան:

3. Կոլտնտեսությունը պարտավորվում է իր դաշտային աշխատանքների այն բոլոր ճյուղերում, վորոնք նպաստելու յեն յերեխաների աշխատանքների դաստիարակությանը, դպրոցի հետ միասին կազմակերպել գործնական պարապմունքներ ուսուցիչների և առաջավոր կոլտնտեսականների ղեկավարությամբ:

4. Կոլտնտեսությունը պարտավորվում է իր յեկամուտներից դրամական և այլ նյութական միջոցներով մասնակցել դպրոցի ծախսերին . . . . . . . . գումարներով և ինվենտարով:

Պարտ. ուսման 10 տոկոս հաշվից պահում է թոշակառու . . . . . ուսանող, կազմակերպում է . . . . աշակերտի համար տաք նախաճաշիկ, գընում է . . . . աշակերտի համար դասական և գրենական պիտույքներ, . . . . աշակերտի հագուստեղեն և կոշիկ . . . . . . աշակերտի համար հանրակացարան.

5. Կոլտնտեսությունը պարտավորվում է իր ուժերով և դպրոցի մասնակցությամբ հերկել, ցանել և մշակել . . . . . . հեկտար հողամաս, . . . . . հեկտար այգի . . . . հեկտար բանջարանոց, վորից ստացված յեկամուտը, կամ նրա համարժեքը,

հատկացնում է դպրոցի կարիքների համար․ բացի այդ, ունենալ հատուկ «կուլտուրական հեկտար», գյուղի կուլտուր-կրթական արիքների համար:

6․ Կոլյերիտ դպրոցները ամառային ամիսներին գյուղից քաղաք տանելու համար անհրաժեշտ է պայմաններ ստեղծել, այն է՝ 1) ստեղծել հատուկ ֆոնդ զանազան քաղաքներ և արդյունաբերական վայրեր էքսկուրսիա տանելու համար, որի համար հատկացնում է . . . . . . . տուրքի:

Սոցմրցման և հարվածային շարժման փորձը հեղափոխում է դպրոցը, դպրոցում կազմակերպելով սոցմրցում, հարվածային շարժում:

7․ Կոլտնտեսությունները կոլյերիտի համար կառուցում են նոր տիպի դպրոցական շենքեր բոլոր հարմարություններով:

Կոլյեկտիվի և վարչ․ ժողովներում լսել դպրոցի վարչության յեռամսյա հաշվետվությունը:

8․ Կոլտնտեսությունն ակտիվ կերպով մասնակցում է դպրոցի արտադրական մանկավարժական աշխատանքներին, և արտադրական պլանի կատարման հետեվյալ ձեվով՝

«Ահազանգի պոստեր» կազմակերպելով, որոնք ազդանշան պիտի տան դպրոցական գործի այս կամ այն ձեղքվածքի մասին, 2) աջակցելով լուսաշխատավորների ինքնամբրացմանը դպրոցին մինչև հնգամյակի վերջը, 3) դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների ռացիոնալիզացիայի նկատմամբ լուսավոր․ աշխատավորների արած առաջարկությունների կիրառմանը լայն չափով աջակցելով: 4) Դպրոցի ներքին միջոցները հայտնաբերելով և դպրոցական կարիքների համար նպատակահարմար ձեվով օգտագործելով: 5)



Ունենում է իր ներկայացուցիչները դպրոցական բոլոր մարմիններում: Սոցմրցման և հարվածային շարժման փորձը տեղափոխում է դպրոց, կազմակերպել այդպիսիները դպրոցում: Սոցմրցման և հարվածային շարժման փորձը տեղափոխում է դպրոց, կազմակերպելով այդպիսիները դպրոցում:

9․ Կոլխոզը և կոլխոզնիկները պատասխանատու յեն դպրոցի ուսումնական և դաստիարակչական բոլոր աշխատանքների համար:

10․ Կոլտնտեսությունը պարտավոր է ձեռք առնել բոլոր միջոցները ոժանդակելու ուսուցիչների նյութական և կոմունալ դրության բարելավմանը:

## Բ. ԴՊՐՈՑԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Դպրոցը պարտավորվում է ընդունել կոլտնտեսականների բոլոր դպրոցական հասակ ունեցող յերեխաներին:

2) Դպրոցը կոլտնտեսության կուլտուր-քաղաքական աշխատանքներին ոժանդակելու համար . . . . . . հոգուց բաղկացած բրիգադներ է տրամադրում՝

ա) . . . բրիգադ . . . հոգուց . . աշխատանքների համար:

բ) . . . . . . .

գ) . . . . . .

3) Վերացնում է կոլտնտեսության . . . անդամների անգրագիտությունը, որոնցից . . . կին և . . . . տղամարդ և տեղական ազգաբնակությունից . . . . . . հոգու . . . . ժամանակամիջոցում:

4) Դպրոցների և այլ կուլտ հիմնարկների ուժերով

կոլտնտեսականների և նրանց ընտանիքների համար կազմակերպել մանկավարժական կոնսուլտացիա, կոնսուլտացիայի աշխատանքների պլանը դպրոցը կազմում է կոլտնտեսության կուլտշինարարական խորհրդի հետ:

5) Կոլտնտեսության ատրնթեր հանրակացարանի, մանկական սենյակների, մսուրների և մանկական ոճախների և կուլտուրական թեյարան--ճաշարանների համար մշտական աշխատանքներ կատարելու տրամադրում է. . : . աշակերտներ և կցում է մեկ ուսուցիչ: Իսկ այնտեղ, որտեղ այդպիսի կուլտուրական ձեռնարկներ չկան, դպրոցը նախաձեռնում է կազմակերպել այդպիսիները:

6) Կոլտնտեսության կուլտ-կենցաղային կարիքները բավարարելու համար դպրոցը կազմակերպում է յուրաքանչյուր դեկադը մեկ անգամ դասախոսություններ, զրույցներ, հակակրոնական, կենցաղային, բնագիտական, սան-լուսավորության, գիտական, հասարակական և քաղաքական խնդիրների շուրջը:

7) Դպրոցը վերցնում է իր վրա՝ կանոնավորել և ռացիոնալ օգտագործման ընել խրճիթ-ընթերցարանի կարմիր անկյունը, ռադիո-սարքավորումը: Խրճիթում կազմակերպում է կուլտուրական ժամանցներ, հանգստի և զվարճության յերեկոներ, այդ աշխատանքներում ներգրավելով բացի կոլտնտեսականներից նաև գյուղային աշխատավորական ազգաբնակչության: Այդ բոլոր աշխատանքները կատարելու համար տրամադրում է . . . . հոգուց բաղկացած մշտական աշխատողներ, որոնցից . . . . . ուսուցիչ:

8) Դպրոցն ակտիվ կերպով բացատրական, ագիտացիոն աշխատանքներ է տանում չքավոր-միջակ անհա-



տությունները մաքսիմալ չափերով կոլտնտեսության մեջ ներգրավելու համար:

9) Ակտիվ կերպով մասնակցել կոլտնտեսության շինարարության արտադրական աշխատանքին, դառնալով պատասխանատու կոլտնտեսության արտադրական պլանի կատարման և գերակատարման գործում, վորի համար տանում է հետևյալ աշխատանքները:

ա) Արտադրական պատվերների կատարումը:

բ) Արտադրության ռացիոնալիզացիայի նպատակով կոլտնտեսականների կողմից արված առաջարկությունների ամփոփումը ու մշակումը:

գ) Կոլտնտեսության ցանքադաշտերի լայնացման ասպարեզում . . . . հեկտար անմշակ հողեր դպրոցի ուժերով դարձնում է մշակելի:

դ) Կազմակերպում է «Ահազանգի պոստեր» մոբիլիզացիայի յե յենթարկում աշակերտներին, նրանց ծնողներին, կոլտնտեսականներին, կոլտնտեսության աշխատանքների ճեղքվածքների շուտափույթ վերացման համար:

յե) Պրոգուլների, հարբեցողության, գլուխ պահողների դեմ մասսայական աշխատանքներ կատարելու համար կազմակերպում է դեմոնստրացիաներ, յերեկոներ, հասարակական դատեր և այլն:

զ) Օժանդակում և օգնում է սոցմրցման, հարվածային և խմբակների կազմակերպման կոլտնտեսության բոլոր ճյուղերում:

է) Կազմակերպում է հողի լաբորատորիական ուսումնասիրության և վորոշում հողի պիտանիությունը տեղական կուլտուրաների համար: Կազմակերպում է նաև սելեկցիոն գործը: Ակտիվ կերպով մասնակցում է

ագրո և զոո մինիմումի կատարման, կազմակերպում ու ղեկավարում է գյուղատնտեսական խմբակները:

ը) Կոլտնտեսության բանջարանոցի, ծաղկանոցների, գյուղական պարտեզների, զբոսավայրերի կազմակերպելու, հսկելու աշխատանքները դպրոցն ամբողջովին վերցնում է իր վրա:

թ) Դպրոցն ակտիվ կերպով աշխատանք է տանում անասնապահությունը, թռչնաբուծությունը և մեղվաբուծությունը զարգացնելու, մասնավորապես կազմակերպելով դպրոցում հավաբուծության, ճագարաբուծության, խոզաբուծության և այլն:

ժ) Կոոպերացիային աջակցել կոլտնտեսականներին և ընդհանրապես աշխատավոր գյուղացիության մեջ թերթերի բաշխումը կարգավորելու համար:

10) Կազմակերպում է կուլտուրական աշխատանքներ կոլխոզնիկների ընտանիքներում:

11) Կազմակերպում է շրջիկ-գրադարան աշակերտների ուժերով . . . հատ:

12) Դպրոցի յեռամսյա ղեկուցումը լսվում է կոլխոզվարչության նիստում:

13) Դպրոցը և կոլտնտեսությունը պատասխանատու յեն բոլոր ձեռնարկած տնտեսական-քաղաքական կամպանիաների համար:

Հաշվի առնելով այս պարտավորությունները կոլտնտեսության վարչությունը և դպրոցն անհրաժեշտ են գտնում վորոշելու այս պայմանագրի ստուգման ժամկետը . . . . . . . . . : Այս պայմանագիրը լայն կերպով պետք է պարզաբանել կոլխոզնիկներին, դպրոցի աշակերտներին ու նրանց ծնողներին:

Այս պայմանագիրը կենսագործելու համար ընտր-



վում է դպրոցի և կոլխոզի կողմից հատուկ մարմին . . . . . . . հոգով (նշել անուն, ազգանունները):

Սույն պայմանագիրը կնքվում է առանց ժամանակի սահմանման, սակայն յուրաքանչյուր տարի, յերկու կողմերը պարտավորվում են վերաքննել պայմանագիրը, կյանքի նոր պահանջների համաձայն փոփոխություններ մտցնելու համար: Սակայն վերանայում կատարվելու յե պայմանագիրը ստորագրելուց վոչ շուտ քան մեկ տարին լրանալը:

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում յերկու կողմերի ստորագրվելուց հետո:

ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ՝

1. Կոլտնտեսութ. վարչ. նախագահ՝
2. Կուս. բջիջի քարտուղար՝
3. ԼԿՅԵՄ բջիջի քարտուղար՝
4. Դպրոցի վարիչ՝
5. Դպր. տեղկոմի նախագահ՝
6. Դպր. աշ. խորհրդի նախագահ՝

---

ՀՀ Ազգային գրադարան
NL0218990

37
Z-11

44.571